

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 33

19 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Գրական հիւծախս»	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
Տարի՛ի խնդիրը՝ ամուսնութեան մեջ	ՏՈՔԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ
Արեղածագն յԱրմառ	ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ
Քիչ մը նահաւատակեալան	ԱՐԱՄ ԹԱՀԹԱՃԵԱՆ
Հաւաստի խորան (Բանաստեղծութիւն).	Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ
Շաբաթ իրիկուն (» » »)	ԵՒ. ԳՕԼԱՆՃԵԱՆ

Միջազգային արձագանգ — Զանազանք.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո. եւ զաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Գրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախսը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Զեռն-Քէ Կը ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیہ غلطہ (تاسیس) غرضی اداره

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարճ մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհաճախ ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միացված մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐՔԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՏԱՐ

Չարչը Պօլս, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

կատարելաբար Երաւարտութիւն։

Մասնահիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը։

ԺԻՒՐԱԿԱՆ ՍԽՏԻ ԴԵՄ ՆԱԽԱԶԳՈՒՀՈՒԹԻՈՒՆ

Ծիւրական ախտի դէմ նախագ զուշուծեան միայն ճամբայ մը կայ. այն է մարմինը միշտ կենսական զօրութեամբ պահել որնոր գրութեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն և դիմացողան ոյժ տալով կրնայ բլլալ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ “ուտելիք—դեղ” է. որ շուտով առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և բարակցաւ առաջին նշանները երևան կ'ըլլեն. ինչպէս տեղական գունատութիւն, թեթեւ սակայն թելաթար հազ, գիշերները սաստկացող բարեխառնութիւն և փորժակի կորուստ են. ժամանակ վատնելու չէ, մէկէն Ըսգթի Բաղադրութիւնն առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնել և այս եղելութիւնը զործնականապէս կը տեսնուի վասնզի հաղաքաւորներ տեսած են և կը տեսնեն:

ԸՍԳԹԻ ԲԱԳԴՐՈՒԹԻՈՒՆ

կատարելապէս անուշահամ է և փորժակը կենդանացունէ, և մարտողութիւնը կ'աճապարէ: Հիւանդութեան սերմը կը մեղցրեն և շուտով մարմինը կը դառալէ: Ըսգթի Բաղադրութիւնն բնդմիշտ այս տեսնուած նշանով վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշեցու վրայ ասոր ուշադրութիւնը ընել պէտք է:

Իսկը Դեղագործները և Դեղալաճարները ինչ ծախս:

21

ՍՊԱՌՄԱՆ ՄՕՏ

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

Ա Ռ Զ Ե Ռ Ն Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

Հայերէն - Գաղղիերէն

2րդ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը պարունակէ աւելի քան 25,000 քառ, ոճ, եղև, զործախախտ քառերու ընկիր հաւաքածոյ մը,

Պիսանի ամէն գործի մարդու — Անհրաժեշտ ամէն դպրոցականի

ԳԻՆ ՄԻԱՅՆ ԵՐԵՔ ԱՄՍՈՑ ՀԱՄԱՐ.

Քառքոնէ կալմ 25 դր., Ընկիր լաքակալմ 27 դր., Կաւեկալմ 32 դր.

1906 Յունիսը մեկէ վերջ երեք տարի անկանառ օրինակներ մնացած չլլան, գիներուն վրայ զգալի յաւելումով մը միայն պիտի վաճառուին:

ԿԵՂԻՆԱՏԵՂԻ: Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՅ

27, Ֆինանանդար Ամերիկան խան, Կ. ՊՈԼԻՍ

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԲՈՒՐ ԳՐԱՎԱՃԱՌԱՅ ԲՈՎ

ԱՄԵՆԻՍ

54^{րդ} ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 33

19 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ԳՐԱԿԱՆ ՀԻԻԾԱԽՏ՝

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Գաւառացի գրող մը, երիտասարդ մը անշուշտ, զրկելով մեզի քանի մը սիրային ոտանաւորներ՝ հրատարակուելու համար Մա- սիսի մէջ, անոնց կընկերացնէ սա տողերը. — «Գրական հիւժախտէ վարակուողներէն մէկն ալ ես եմ, որուն ընդունարան եղաւ երկար ատեն Պոլսոյ պարբերական թերթե- րէն մէկը, չքացնելով բանաստեղծելու ե- ռանդիս ուժգնութիւնը իր էջերուն մէջ: Ահա՛ նորէն կը վերընձիւղի գրելու այդ խանդս զոր մարած կը կարծէի ես, ու կուզէ պատուական ընդունարան մը, մէջը թափե- լու համար հոգւոյս իղձերն ու սրտիս խո- հերը»:

Մէկդի թողլով առ այժմ զրկուած ոտա- նաւորները, որոնցմով զբաղիլ չէ նպատակ- նիս, այս հակիրճ նամակը ինքնին կը պատ- կերացնէ երեւոյթ մը, հոգեկան վիճակ մը որ շատերուն քով նոյն և միօրինակ է՝ գա- ւառային կամ գիւղական միջավայրերու մէջ, — քերթելու մարմաջը: Եւ այս տեսակէտով, եթէ ուշադրութեան առարկայ ընենք զայն, անհատական նիւթով մը չէ՝ որ զբաղած պիտի ըլլանք: Թղթաբերը շարունակ կը բերէ մեզ արդէն այդ ոտանաւորներէն, մե- լամաղձոտ ու հալումաշ տողեր՝ կոյսի մը նուաղուն աչքերուն թովիչ տպաւորութեան տակ գրուած, հառաչանքներով լեցուն, բո- լորն ալ գրեթէ իրարու նմանող՝ եթէ ո՛չ ձեւով, գէթ իմաստով: Ասոնցմէ լաւագոյն- ները կը հրատարակուին ու անյաջողները կը մոռցուին: Ո՛չ զրկողին համար մեղադրելի բան մը կայ ասոր մէջ, ո՛չ մերժողին խըմ-

բագրական բարքերու մէկ routineն է, որ կը կրկնուի հինէն ի վեր: Միայն թէ, այս- քանով չի վերջանար. և եթէ այդ բանաս- տեղծութեանց հրատարակութեան իրաւունքը զլացողը շուտով յաջորդէ ձեռագիրներուն կ'անցնի, ոտանաւորներու դէզին վրայ չի մտածելով այլևս, այս վերջիններուն հեղի- նակները հե ի հե հետաքրքրութեան մը մատնուած, սրտատրոփ և անձկադին կըս- պասեն անդին, թէ լոյս պիտի տեսնէ՞ արդ- եօք գրածնին, ու տենդոտ մատներով կը կտրտեն կը դարձնեն շաբաթաթերթին էջե- րը, հանդիպելու համար իրենց գգուած փայ- փայած բանաստեղծութեանը որուն վրայ անքուն գիշերներ անցուցած էին: Եւ եթէ չի գտնեն, կը տրտմին:

Այս երկւոյթին, այս հոգեկան վիճակին է որ ակնարկել ուղեցինք, որուն աչքառու մէկ արտայայտութիւնն էր վերև յիշուած նամակը իր պարզութեանը ու անկեղծու- թեանը մէջ:

Ինչո՞ւ վարակուած ըլլաք, ազնիւ՝ ու գրասէր պատանիներ, «գրական հիւժախտ»էն, — բացատրութիւն մը զոր այնքան լրջօրէն կը գործածէք՝ ընդունելով թէ ա՛լ հիւան- դութիւն մը դարձած է ձեզի համար ոտա- նաւոր գրելը, նոյն իսկ երբ ձեր առաջին հրատարակութեանց նախափորձերէն չէք կրցած անուն մը վաստկիլ որ փնտուել տար ձեր տաղերը: Ու մէկ թերթէն միւս թեր- թին կը դիմէք: Լաւագոյն կերպով շարժած չպիտի՞ ըլլայիք, փոխանակ անձնատուր ըլլա-

լու այդ հիւծախտին, մաքառելով անոր դէմ, վանելով ձեզմէ՝ տողը տողին, յանգը յանգին բերելու սովորամուծութիւնը ու զերծ մնալով այդ բռնազբօսիկ յոգնութենէն: Կամ եթէ անպատճառ միտքերնիդ դրած էք յարատեւել գրական այդ սեռին մէջ, զոնէ շատ կարգայիք ու քիչ արտադրէիք, և այդ քիչերէն ալ ընտրելագոյն դատածնիդ ներկայացնէիք: Այս կերպով միայն պիտի կրնայ ճշդութիւնը բանաստեղծական կարողութիւնիդ, եթէ ունիք:

Իրաւ է թէ Պոլսոյ թերթերը գրական ու բանաստեղծական գրուածքներու շատ ճոխ պէսպիսութիւն մը չեն բերեր ձեզի, բայց վերջապէս այդ կարգի նիւթերու լաւագոյնները, խնամուածները կը բովանդակեն, հեղինակութիւն կամ թարգմանութիւն: Յետոյ, այստեղ յաջորդաբար տուելով «հատընտիր»ները, «հաւաքածոյ»ները, «թանգարան»ները կան, շատ դիւրամատչելի գիւնդով, որոնք կը բովանդակեն հին ու նոր ծանօթ քերթողներու և արձակագիրներու գեղեցկագոյն արտադրութիւնները: Ասոնք բոլորը ուսումնասիրութեան մէյմէկ առարկաներ են ձեզի համար. հետեւեցէ՛ք անոնց, զբաղեցէ՛ք քիչ մը անոնցմով, ու վերջը միայն գրիչնիդ ձեռք առէք:

Ուրիշ ատեն, այս էջերուն մէջ, պարզած ենք մեր գրական դաւանանքը՝ «անունի հմայք»ի մասին, թէ և շատ մը սկզբնականներ դեռ կը յամառին գանգատիլ, որ եթէ իրենց ոտանաւորները չեն հրատարակուիր՝ իրենք ծանօթ անուն մը չունենալուն համար է: Ընդհակառակը, գրողի մը անունին ծանօթ դառնալը իրական արժանիքէն կախում ունի, որ կանուխէն կը յայտնուի եւ ապացուցանելու համար այս դաւանանքնիս, «Նորերու Բաժինը» հաստատեցինք Մասիսի մէջ, որ մեծ արդիւնք մը չտուաւ դժբաղդաբար: Նորերէն ու նորագոյններէն անոնք՝ որ կը խոստանային յատկանշական անկիւն մը գրաւել մեր ժամանակակից գրականութեան մէջ, լռիկ մնչիկ իրենց ճամբան առին, նոյն իսկ առանց անցնելու այդ «Բաժին»ին բովէն, ու իրենց արձակը և ոտանաւորը հաւասարապէս կը փնտ- ուին հիմակ:

Մի՛ կարծէք սակայն թէ այս մտրամաշը դաւառի սկսնակ գրողներուն, դպրոցէն հազիւ ելլող պատանիներուն միայն յատուկ է. հոս, մեր շուրջը, մեր պատանեկութեան մէջ ալ ունիք ձեր եղբայրակիցները. սա տարբերութեամբ որ, մինչ դուք սիրային հառաչանք մը թուղթին յանձնած ատեննիդ՝ ճշմարտապէս ալ կը հառաչէք թերեւ, մերժուած սիրոյ մը կամ բաղձացուած էակի մը համար, մայրաքաղաքի պատանին, երիտասարդը մանաւանդ, թուղթին վրայ միայն կը հառաչէ, իր ոտանաւորներուն մէջ միայն կուլայ անհետացող սիրոյ մը ետեւէն. իրականութեան մէջ, սկեպտիկ ու դրական, շատ փոյթ չընել սիրային մերժում մը որ անտարբեր կը թողու զինքը:

Ասոնք խառնուածքի, միջավայրի, բարքերու տարբերութեան խնդիրներ են սակայն, որ կրնան չեղեցնել նիւթերնիս որ գրական ու բանաստեղծական նախափորձերու վրայ ակնարկ մը միայն պիտի ըլլար, իր ծագումը առնելով «գրական հիւծախտ»էն որ ընդունուած բացատրութեան մը պէս կը դործածուի ահա՛, նոր երեւան բերուած հիւանդութեան մը պէս: Ու պէտք է աւելցնել թէ, սին բառ մը չէ՛ ան, եւ անկէ վարակուողները փոքր թիւ մը չեն կազմեր: Ատեն մը կ'ըսէին թէ neurasthénie՝ փափկակազմ, դժայուն, ջղային կիներուն հոգեկան մէկ վիճակն է որ անդգալաբար հիւանդութեան կարգ անցաւ, ընդունուելով բժիշկներուն կողմէ: «Գրական հիւծախտ»ն ալ մեր կարգ մը պատանիներուն բանաստեղծ դառնալու մղձաւանջէն առաջ եկած մտաւորական վիճակ մըն է որ եթէ ֆիզիքական հիւանդութեանց կարգը չպիտի դասուի բնաւ, դէթ բարոյապէս կամ հոգեկան կերպով իր ազդեցութիւնը կունենայ, առողջ մտքի տէր, իր գործին, իր ասպարէզին, իր ապագային վրայ մտածելու պէտք ունեցող պատանիներուն վրայ՝ բոնք ոտանաւոր միայն կ'երազեն:

Ու այս տողերը կը գրենք ո՛չ թէ հեգնելու համար զիրենք, — հեգնութեան լիառատ պաշար մը ունենալով արդէն մեր լրա-

գրութեան մէկ մասին մէջ, ամէնէն նորա-
միտ կարծուածներէն մինչեւ նորեկներուն
քով, — այլ ճշմարիտ արդատանքով մը,
եւ եթէ բառը յաւակնոտ կը գտնէք՝ ճշմա-
րիտ համակրանքով մը: Եթէ մէկ, երկու,
երեք ըլլային այդ «հիւժախտէն» վարակուող-
ները, կարելի էր անտեսել. բայց հարիւր-
ներով պիտի համրուէին, եթէ կարելի ըլլար
վիճակագրական ցանկ մը պատրաստել՝ իւ-
րաքանչիւր խմբագրութեան ուղղուած այս
կարգի նամակներու, տխրօրէն միամիտ ու
պարզունակ: Երբ բժիշկները, առողջաբան-
ները կը խօսին կեանքի ֆիզիքական պայ-
մաններուն վրայ, ինչու համար գրչի ասպա-
րէզին մէջ փորձառութիւն ունեցողներն ալ,
— նոյն իսկ առանց իրենք արժանիք մը ու-
նենալու, — չի խօսին մտաւորական առող-
ջութեան պայմաններուն վրայ, որ անջատ
չէ մարմնականէն:

Դաստիարակները շատ բարի գործ մը
կատարած պիտի ըլլային՝ իրենց խնամքին
յանձնուած դպրոցական պատանիները կա-
նուխէն զգուշացնելով «գրական հիւժախտ»ի
վարակումէն, անոնց մատաղ միտքերուն մէջ
տեղաւորելով առողջ ու յստակ սկզբունք-
ներ՝ գրականութեան ու բանաստեղծութեան
մասին ալ, իրենք ընտրելով այդ հակումը
ու ճաշակը ունեցողները ու քաջալերելով
ալ նաեւ, բայց զանոնք միայն. ու միւս-
ները, մեծամասնութիւնը, հրաժարացնելով
ոտանաւորամոլութենէն:

Օրաթերթերը կը ծանուցանեն թէ, եկե-
ղեցական ու դպրոցական կալուածներու վե-
րադարձման ու ծխական դպրոցներու վե-
րաբացման գործին մղում տալու համար,
Ս. Հայրապետը այս օրերս էջմիածնէն Թիֆ-
լիզ կ'ուղեւորի:

Դրիգոր էֆ. Մալխաս իր թարգմանօրէն
հրատարակած Դեռահաս միջակոսեաւ Վէ-
պէն օրինակ մը մատուցած ըլլալով Ս. Պատ-
րիարք Հօր, Ն. Ամենապատուութիւնը քա-
ջալերական գիր մը ուղղած է թարգմանչին:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասիսի այս թիւով կը հրատարակենք
երկու յօդուածներ որոնք այժմէութիւն ու-
նին: ՏՈՒԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ, որուն
մասնագիտութիւնն է տղայոց յատուկ հի-
ւանդութեանց դարմանումը՝ որու մասին
լուրջ ուսումնասիրութիւններ կատարելէ յե-
տոյ ի Ֆրանսա, մայրաքաղաքս հաստատուե-
լէն ի վեր ալ գործնականապէս մեծ փոր-
ձառութիւն ստացած է, ձեռք կ'առնէ ան-
չափահաս տարիքի մէջ կատարուող ամուս-
նութեանց խնդիրը: Երիտասարդ բժիշկը
ինք մօտէն ականատես եղած է այդ յօռի
սովորութեան աղետալի հետեւանքներուն,
կ. Պոլսոյ չրջակայ գաւառակներուն մէջ իր
կատարած բժշկական այցելութիւններու մի-
ջոցին, ընտանեկան յարկերու տակ, հիւանդ-
ներու սնարին մօտ, և իր այս գննութեանց
արդիւնքն է զոր կը հրապարակէ հակիրճ՝
բայց ուշադրութեան արժանի յօդուածով
մը: Խնդրին այժմէութիւնն հո'ն է որ, այս
օրերս Պատրիարքարանն ալ կը զգաղի. նոյն
կարգին պատկանող հարցով մը որ տեսալին
մէջ միակը չէ:

* * Օրուան կարեւորութիւն ունի նաեւ
ճարտարապետ ԱՐԱՄ Է. Բ. ԹԱՆՔԱՆԻ
մասնագիտական մէկ տեսութիւնը՝ Մայր
վարժարանի վերաշինութեան առթիւ: Մեր
ընթերցողները կը յիշեն անշուշտ թէ Մասիսի
30րդ թիւով հրատարակած էինք Յովհ. էֆ.
Թաւանճեանի փոքրիկ մէկ նամակը որով
կ'առաջարկէր որ ձեռնհաս անձինք այժմէն
յայտնեն իրենց գաղափարը այդ վերաշինու-
թեան առթիւ: Այս հրապարակային առա-
ջարկին առթիւ, որուն օգտակարութիւնը
անժխտելի է, խնդրեցինք Թահթաճեան էֆ. իէ
իր տեսութիւնները պարզել այդ դպրոցա-
կան շինութեան առթիւ, և ուրախ ենք որ
երկուստարդ ճարտարապետը ընդունեց
խմբագրութեանս հրաւերը:

ՏԱՐԻՔԻ ԽՆԴԻՐԸ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ժամանակէ մ'ի վեր գիտունները, ընկերաբանները, մարդասէրները յուզման ու վրդովման մատնուած են Եւրոպայի մէջ, աժէն կողմէ կը գրեն, կը ճառեն թէ մարդկային ցեղը օրըստօրէ փիղիգապէս տկարանալու, այլասերելու վրայ է. խղճմտօրէն պատրաստուած վիճակագրութիւններ ցոյց կուտան թէ տկարակազմ սերունդ մը կը հասնի, թէ ի ծնէ վատոյժներու, ցաւագարներու թիւը հետզհետէ կ'աճի ու կը բազմանայ, թէ ժամ է առաջը առնել, ժողովուրդին մատնանիլ ընել պատճառները՝ որպէսզի զգուշանայ:

Կ'արժէ որ մենք ալ զբաղինք այս ընկերային — առողջաբանական հարցով:

Ալքոլամոլութիւնը, գաղղիական ախտը, ծխախոտը իրաւ է թէ մարդկային ցեղը կը վատթարացնեն, կը փճացնեն, և հարկ է ժամ առաջ այս վտանգները մատնանիլ ընել հանրութեան. ո՛չ թէ սակայն վտանգներէն մէկը կամ միւսը առանձին, ալքոլամոլութիւնը կամ գաղղիական ախտը՝ օրինակի համար, այլ ամէնքը միասին: Պէտք է խրատել, քարոզել, համոզել անդադար. ուսուցիչը իր աշակերտներուն՝ դպրոցի մէջ, կրօնաւորը իր հօտին՝ եկեղեցիի մէջ, օրագրողը իր թերթին միջոցաւ, բժիշկը իր հիւանդներուն, ընտանիքներու մէջ: Պէտք է ցոյց տալ որ, եթէ ցեղը տկարացնող, այլասերող պատճառները կը յարատեւեն, մենք ալ անմասն չենք այդ բանին մէջ. ժողովուրդին անուս ըլլալը, առողջապահութեան տարրական սկզբունքներուն անգիտակից գտնուիլը մեծագոյն բաժինը ունին. թէ բաւական չէ անհատին մտաւորականը միայն զարգացնել, պէտք է մարմինն ալ զօրացնել:

Եւ մարդկային ցեղը այլասերող, վատթարացնող պատճառներէն մէկն ալ, և գլխաւորը, անչափահաս ամուսնութիւնն է, այսինքն օրինական տարիքէն պակաս հասակի մէջ կնքուած միութիւնը: Առնենք այս

խնդիրը, որուն վրայ թէև ուշարութիւն չի դարձուիր մայրաքաղաքին մէջ՝ հոս հաշուադէպ ըլլալուն պատճառաւ, բայց շրջակայ դաւառականներու մէջ համաճարակ ախտի մը երեւոյթը ունի անիկայ, արմատացած ըլլալով մեր ընտանեկան սովորոյթներուն մէջ: Ես ինքս, բժշկական այցելութեանցս միջոցին ականատես եղած ըլլալով, կուզեմ մատնանիլ ընել անչափահաս ամուսնութեանց վտանգը, որպէս զի խնդիրը մէջտեղ դրուի, բացատրուի, կրկնուի, և ծնողքներն զգուշանան անկէ: Այդ ամուսնութիւնները կընքել տուողները միակ նշանաբան մը ունենալ կը թուին. «աճիլ և բազմանալ»: Բայց լաւագոյն չէ՞ միթէ, քիչ աճիլ քիչ բազմանալ, սակայն առողջ դաւաղներ հասցնել, որակը քանակէն առաջ փնտռել:

Յաւալի է տեսնել որ Պոլսոյ մօտակայ գիւղաքաղաքներու մէջ, Նիկոմիդիայէն անդին ու շրջակայքը, — նոյն իսկ հեռաւոր գաւառներու մէջ ալ, որոնց արձագանգները կը հասնին երբեմն լրագրութեան, — 12, 13 ու յաճախ մինչև ... տասը տարեկան աղջիկներ ամուսնութեան կը մղուին, հակառակ բժշկական սկզբունքներու և կրօնային պատուէրներու: Այս ընկերային աղէտին սկզբնապատճառը ո՛չ ապաքէն ծնողքներն են որոնք կ'աճապարեն նշանել իրենց աղջիկ զաւակները ու կը փափազին շուտ մը հարս տեսնել, որովհետեւ իրենք ալ այնպէս տեսած են իրենց հաւերէն: Յոռի սովորութիւն մըն է այս որ կը փոխադրուի սերունդէ սերունդ, առանց նկատի առնուելու թէ հին ժամանակներու առողջութիւնը չէ մնացած հիմակ. թէ մարդկային մարմինը, փիղիքական պայմանները փոխուած են ժամանակին հետ, և ըստ այնմ վարուելու է, ամուսնական սովորոյթներն ալ բարեփոխելով: Ծնողքներն ու քահանաները գիտնալու են թէ արբունքի հասակը՝ ամուսնութեան յարմար տարիք չի նշանակել, այլ անկէ 3 — 4 — 5 տարի վերջը միայն մարմինը կըստանայ կազմ մը որ կը տոկայ յղիութեան անպատեհութեանց, աղաքերքի ու կաթնտուութեան յոգնութեանց, փանինե'ր կրնամ թուել, միակ գիւղի մը

մէջ, արքունքի հասակէն առաջ ամուսնացողներու, որոնք և ո'չ իսկ կրցած են զաւակնին դիեցնել:

Երեւակայեցէ՛ք որ երբ 12—13 տարեկան աղջիկ մը տարիէ մը մայր ըլլայ, ինչպէ՛ս պիտի կատարէ մայրական դժուար դերը. խօսքս մասնաւորապէս գիւղական միջավայրերու համար է ուր սպասուհին, կաթնտուն, խոհարարը դաշտը կամ այգին աշխատող կիներն է. երբ ատոնց մարմինը իր վերջնական ձեւը առած չէ տակաւին, և աճելու, զօրանալու պէտք ունի, ինչ ֆիզիքական պայմաններու մէջ պիտի բերէ զաւակ մը, մեծցնէ ու կաթ տայ: Նորածինը վատոյժ, տխրոյժ էակ մը պիտի ըլլայ բնականաբար: Աւելցուցէ՛ք ասոր վրայ՝ դիեցութեան կերպերու տգիտութիւնը, որուն զոհ կերթան նորածիններէն շատեր: Մօտէն դիտողները ստուգած են որ, գիւղերու մէջ կիները 6—8—10 և երբեմն աւելի զաւակ կունենան, բայց ընդհանրապէս կէսը կամ քառորդը կը կորսնցունեն, երկու-երեք տարեկան հասակնուն մէջ. խեղճ պղտիկները՝ մայրերնուն անչափահասութեան հետեւանքով՝ տկարակալմ կը ծնին ու չեն դիմանար:

Փոքր հասակի մէջ կատարուած ամուսնութեանց առաջ բերած ընտանեկան աղէտներուն վրայ աւելցուցէ՛ք ազգականներու միջեւ կատարուած ամուսնութեանց ո'չ նուազ ցաւալի պարագան. ամէն գիւղացի իր գիւղին մէջ եւ իր ազգականին հետ կուղէ ամուսնանալ, վախնալով որ եթէ մօտակայ կամ հեռաւոր գիւղէ աղջիկ մը հարս առնէ, որուն բնաւորութիւնը չգիտեր, իր տղան դժբաղդ կըլլայ: Այնպէս որ, շատ մը գիւղերու մէջ, նոյն իսկ բաղմամարդ, ամէն ընտանիք մօտէն կամ հեռուէն իրարու հետ ազգականութիւն ու խնամութիւն կունենայ, որոնք հետզհետէ կը շառնան ու կը ճիւղաւորուին: Պիւֆօն ըսած է թէ, սեռը մէկ քանի սերունդ վերջը կը տկարանայ ու կը վատթարանայ, եթէ խնամութիւնները միեւնոյն ընտանիքներու միջեւ կազմուած են: Բարեբաղտաբար, կրօնքը՝ անշուշտ արդիւնքներու վրայ յենլով՝ գիտուններէն շատ

առաջ այս վտանգը հեռատեսած եւ միեւնոյն ընտանիքի անդամներուն միջեւ ամուսնութիւնը արգիլած է:

Առանց բժշկական երկար տեսութեանց մէջ մտնելու, որոնք աւելորդ պիտի ըլլային հանրութեան համար, այս հակիրճ գրուածքով կուզեմ ուշադրութիւն հրաւիրել գիւղական այս երկու արմատացած եւ յոռի բարքերուն վրայ, — անչափահաս ամուսնութիւնները ու արեւակից ամուսնութիւնները, — զորս տակաւ առ տակաւ անհետացնելու աշխատիլը մարդասիրական պարտականութիւն մըն է: Թո՛ղ գիւղացին վարժուի ուրիշ գիւղէ, իր աղգական ընտանիքներէն դուրս հարս առնելու. թո՛ղ վարժուի իր աղջիկը անչափահաս տարիքի մէջ չամուսնացնել, — թո՛ղ էրիկ մարդիկն ալ հրաժարին ալքոլամոլութենէ, — եւ այն ատեն՝ մարմնով ու մտքով կայտառ, գեղեցիկ սերունդ մը պիտի հասնի որ մինչեւ իսկ առաջնութիւն ունենայ մարմնական մրցումներու մէջ որոնք կը կատարուին հիմայ կիներու եւ երախտներու համար:

ՏՈՒԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Քերտ

ԾԱԲԱՅ ԽՐԵԿՈՒՆ

Պիւրկ շարժումով մը գաղտուկ
Ուր ցաւն հոգւոյն կը կծկի,
Խուսկ ծխայ կին մ'— հօւր հողի—
Խաբոյկին շուրջ դըրած ծունկ:

Մայրս է. գաղտուկ իր արցունք
Աղօթքին մէջ կը ցածքի. —
Խուսկը կ'ելլէ մեղմակի.
Կատուն, շփոթ, գընէ ունկ...

Խուսկը կ'ելլէ, վտիտ սիւն,
Անհունին լուռ տաճարին,
Յից բռնած իր մեծութիւն:

Կինը փարած յա՛ր, ուժգին,
Այդ հէք սիւնին — յուշածա՛ռ—
Տայ երակ մ'ահունին սա՛ռ...

ՆԳՈՒՍԱՐԴ ԴՕԼԱՆՃԵԱՆ

ԱՐԵՂԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ

(ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇԱՍՏԱԿՆԵՐ)

Ըստ Սաղմոսի «Որպէս փափաքէ եղջերու յաղըներս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ ի գաւիթս քո, Տէր», այսպէս Վահան վարդապետ քունի պէտքը կը դադար, այլ ի դուրս Հաղիւ աչերը կը փակէր և ահա՛ թըք թըք մը կամ դփրտոց մը զինքը կ'արթնցնէր։

Այս անգամ սենեկի դռնէն ներս մտնողն էր թուճաւիկի, կարմրերես, մատղաշուկ մէկը, որ սիրուն անասնիկի մը անունն ալ կը կրէր, — Եղնիկ վարդապետ, — որ վանական եղած էր, հակառակ վանական այն դրուժեան, որ շատոնց կը գործադրուէր հոն, այն էր թեմականներէն դուրս ոչ ոք Արմաշի համար, մանաւանդ Ստամպոլցի, միաբան ընդունիլ, և հակառակ նաև մեր եկեղեցւոյ մէջ գրեթէ ընդհանրական եղած այն կանոնին, այն է երիտասարդ՝ մանաւանդ փափկասուն մէկը չկոչել վանականութեան։ Եղնիկ վարդապետ թէ՛ Ստամպոլցի և թէ՛ բարեփոխման ընտանիքի մը զաւակն ըլլալով հանդերձ՝ վանական ըլլալու կրկին մեղքը գործած էր. և անոր այս կրկին մեղքը գործելուն հաւանած էր Վահան վարդապետ, որ վաղածանօթ էր այդ ընտանիքին և քաջամուտ այդ եկեղեցական հին կանոնին։

Եղնիկ վարդապետ սենեկէն ներս կը մտնէ չմանէր, Վահան վարդապետի երեսն ի վեր կը պօռայ։

«Զիս ի՞նչու հոս զրկեցիր»։

— Գէշ ըրի. վարդապետ եղեր ես։

«Երուսաղէմ պիտի երթայի, թող չտուիր»։

— Հոն բան մը չէիր ըլլար։

«Անապատը պիտի երթայի, թող չտուիր»։

— Հոն ալ մարդ չէիր ըլլար»։

«Հոս ի՞նչ եղայ»։

— Խոճաման դպրեւանքի մը կարգապահ եղեր ես։ Ա՛լ ի՞նչ կ'ուզես։

«Կարգապահ։ Շորապահ չըսե՞ս. սրկէ նրկէ հաւքտուած ժողովուած ըստ ազգի և ըստ նմանութեան դէմքով ու հասակով անհամեմատ աղեկներով չապիկն ու վարտիք,

հագուստ ու կաշուստ կարգաւորել պահպանել և բաժնել է պաշտօնս, և այսքան գուրգուրանքիս հակառակ՝ այսքան իրենց հանդերձեղէններուն ժողովուածքիս հաւքտուածքիս կարկտուածքիս թօփիկ թօփիկ փողոյէքիս ծալլողէքիս տեղաւորտուածքիս հոգածութեանս հակառակ՝ զիս ի՞նչ անուանեն ըսէ՛»։

— Մայր եղնիկ։

«Ի՛նչ, դուն ալ, կատակը մէկդի. միշտ դուրսնախօս և առակաբան, խմես, թէ չխմես. այժմ սա «սնեալն իւղով ու մեղրով, օծեալն խունկով և մոմով» Ատաբաղարցին, Սմբատ վարդապետ, ամէն ատեն զիս տեսնելուն՝ միւսները կը մշտէ ըսելով. «Ահա զայ թօփիկ ապլան», անոնք ալ, ապերախտանքը, խնդալով մարմերով կը փափսան իրարու և գուցէ օր մը երեսիս պոռան. «Թօփիկ ապլա»։

— Դուն ալ անոնց ամէն մէկին երեսն ի վեր կը պօռաս. «Եւ դու Խելօք աղբա՛ր»։

«Կեցցե՛ս ուրեմն. աղէ՛կ գիւտ։ Բայց ի՞նչ պիտի ըլլայ իմ վերջս. այս վանքը ալ ինծի նեղ կուգայ կոր»։

— Եթէ այս վանքը նեղ է, աշխարհս լայն է. բայց աշխարհս մտնելէ առաջ մտածելու էք. դուք ի՞նչ վարդապետ ի՞նչ ձիրք ունիք հոն մտնելու համար։

«Բարեկազմ եմ և ճարտասան»։

— Բարեկազմ՝ կիներու և ճարտասան այրերու համար ըսել կ'ուզէք։

«Ոչ, պոյ-պոսս տեղն է, և բերնիս մէջ ունիմ քաջախօս լեզու։ Շիրք կը հագուիմ և գեղեցիկ կը խօսիմ, «և յայնժամ աշխարհ զկնի իմ գայ»։

— Փորձն ըրա՞ծ էք։

«Հապա՛, օր մը սա մեր ագարակին մէջ վեղարս դրի, ծաղկեայ փիլոն հագայ, գաւաղան մը առի, թուժի ծառի մը վրայ ելայ և ճառեցի «Կուսութեան» (*) վրայ, այնքան աղդու որ Արսէն վարդապետ որ միակ ունեւորներս էր, սկսաւ մազերը փետտելով հեծեծազին լալ և ողբալ թէ «Ի՛նչու սուտ աշխարհս է մտեր, կրին է յետոյ կորուսեր, և հիմա չուշտակ վարդապետ է եղեր»։

(*) Տպուած Յ. Դուրգէն էֆի աշխարհաբար լեզուի երկհատոր Հաւաքածոյին մէջ։

— Եթէ դուն քեզ այդքան վստահ ես, երթաս բարով: Բայց Օրմանեան Սրբազան ի՞նչ կ'ըսէ:

«Խուլած—խուլած յանձնարարագիր ինէ», կ'ըսէ ան. վասն զի վանքիս մէջ ինք մինակ կը մնայ քաջաքարող: Միայն թէ բանէ մը կ'ընկրկիմ Ստամպոլ մտնելէ:

— Ի՞նչ բանէ:

«Զիս ձեռնադրող Պատրիարքին հետապնդողներէն»:

— Ի՞նչու հալածուիս անորմէ:

«Վասնզի ան գիտէ թէ որքան ճարպիկ մէկն եմ, քաջ հոգետ, սքանչելի կենցաղագէտ, հիանալի հրապուրիչ և... պիտի կարծէ թէ ես վանքէն ելեր եկեր եմ Ստամպոլ, իր աթոռին թեկնածու ըլլալու»:

— Պատրիարքական աթոռը, դո՛ւք:

«Ա՛յո, ես»:

Եզնիկ վարդապետ այս վերջին խօսքը հաղիւ թէ արտասանեց, Վահան վարդապետ ա՛լ խմեց ու խմեց. ճաթելու չափ խմեց և ճաթելու չափ խնդաց ու խնդաց, մինչև որ խելակորոյս քնացաւ:

Ու եղաւ որ օր մը լսուի թէ այդ Եզնիկ վարդապետ Քարակէօմրիւկի ժամուն և յետոյ Ղալաթիոյ քարոզիչ եղեր է, յետոյ օր մը լսուի թէ Բալուի առաջնորդական տեղապահ եղեր է և ետքը Խարբերդի:

Իսկ հիմա ո՛ւր է.— Բաղէշ առաջնորդ է, ուր կըսպասէ որ օր մը էջմիածին կամ Սիս երթայ և հոն մէկ օրուան մէջ եպիսկոպոս ու կաթողիկոս ըլլայ:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԷՐ—ՄԻՆԱՍԵԱՆ

ԶԱԽԱՏՔԻ ԲՈՐԱՆ

(Ս Ի Ր Ե Ր Գ)

Ազօթքի, խունկի, անմեղ իղձերու
Երկիւղածութեամբ լի մըթնոլորտին
Մէջ ըսկեպոսիկ սիրտս ու հոգիս արու՝
Տարաժ յոյզերու ցնորքով կը յորդին...:

Ու պահ մը անկեղծ, բուխ տըղու մը պէս
Որուն կուրծքին տակ տենչեր օրօրուն
Կը խաչածեւեն իրար, յոռետես
Խոհերս, անպայման, կը ցընդին իսկոյն:

Մինչ խորհրդաւոր ըզգայութիւններ
Կը պատեն այսպէս խորանն հաւատքին,
Ու սեւեռաբիր, մըտքով մ'անըստուեր,
Սէր-իտէալին կը ձգտի հոգին:

Վերացումներու ըսփոփանքին մէջ՝
— Ինքնախաբուծիւն, պատրանք կամաւոր —
Կը խորհիմ աննիւթ վայելքին, անչէջ
Պաշտամունքներու հաճոյքին աղւոր...:

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՔԻՉ ՄԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

ՄԱՅՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

(ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒԱԾ)

Մեր մէջ գիտական կամ արհեստական յօդուածներ հրատարակել՝ որպէս զի համայնքը անոնցմէ օգտուի իր սոսկական կամ հանրային ձեռնարկութեանց մէջ, բաւական անմեղ գաղափար մըն է որ արտաքին յայտուած էր Մայր վարժարանի ասպագայ վերաշինութեան առթիւ. վասն զի մեր մէջ, բացառութիւններն յարգելով, դպրոց կամ եկեղեցի չի ողորդուած աւելի պէտքը զգացած են հաճոյակատար շողոքորթութեանց քան թէ հմտալից յօդուածագիրներու և կամ մասնագէտ ճարտարագիտներու խորհուրդներուն ու դիտողութեանց: Այս այսպէս ըլլալով՝ շատ լաւ համոզուած եմ որ իմ գրութիւններս ալ կոչուած են ըլլալու մեռեալ տառեր, այսու հանդերձ ձեռք կ'առնում գրիչս, մերժած չըլլալու համար միմիայն Մասիսի պատուական խմբագրութեան անհատական հրատէրը:

Շէնք մը կառուցանել անթերի ու կատարելագործեալ մեղտաներով՝ կարծուածին չափ դիւրին բան չէ. պիտի ջանամ ուրեմն ընդհանուր տեսութեամբ մը ի վեր հանել շարք մը գլխաւոր նկատումներու, որոնք անհրաժեշտ են վարժարանական շինութեան մը ամենակարեւոր գործին մէջ, աւելի մասնաւորապէս տեսութեանց մասնէ մեզ ներքի չըլլալով սոյն անձուկ շրջանակին մէջ:

Ներքին բաժանմանց նպատակայարմար դասաւորումը, առողջապահիկ պայմաններու անթերի իրադրոճումը, ամբողջութեան ու երկարատեւութեան շինութեան կերպերը, ահա՛ ինչ որ մեզ համար խնդրոյ առարկայ պիտի դառնան, եւ ինչ որ ամէնէն աւելի անտեսուած գտած եմ մեր վարժարանաց մեծագոյն մասին մէջ:

Ներքին բաժանումներու նպատակայարմար դասաւորութեան մասին՝ վարժարանին ուսումնական ծրագիրը կոչուած է կատարելու

կարեւոր դեր մը, այնպէս՝ ինչպէս տանուտէր մը պիտի որոշէր քանակը իր կառուցանելիք տան սենեակներուն ու յարկաբաժիններուն, ուստի դասարաններու թուոյն, անոնց դրութեան տեսակներուն, ինչպէս նաեւ շէնքին կարգապահութեան վերաբերեալ ընդհանուր ընտրութիւնը պիտի թողում վարժարանին ուսումնական մարմնոյն: Ասի արգելք չպիտի ըլլայ սակայն մատնանիլ ընելու ինչ որ գլխաւորաբար կը պակսի մեր ազգ. վարժարանաց մէջ:

Ապագայ Մայր վարժարանը պէտք է ունենայ ընդարձակ սրահ մը կիսաբոլորակաձեւ ու ամփիթատրոնի աստիճաններով, որպէս զի իւրաքանչիւր աշակերտի դիրքն ու տեսութիւնը մի եւ նոյնը ըլլայ սեւ տախտակին, փորձի սեղանին եւ կամ դասատուին գրաւած տեղւոյն նկատմամբ: Այս սրահը պիտի ծառայէ իրագիտական փորձերու, գծագրութեան ու երաժշտութեան դասերու, բարոյական ու առողջապահական ընդհանուր դասախօսութիւններու, դպրոցական հանդէսներու եւ այլն: Եւ որովհետեւ այս ամէնը առաւել կամ նուազ աղմկալից տեւողութիւն մը կունենան, կարեւոր է որ այս սրահը կարելի եղածին չափ անջատուած ըլլայ շէնքին միւս մասերէն, որպէս զի անկէ թռած աղմուկը՝ չգայ խանգարել դասարաններու լռութիւնը կամ վարժարանին կարգապահութիւնը:

Դասարաններուն առնթերակաց թանգարան — մատենադարան մը կարեւոր պէտք մըն է, կահաւորուած առաւել կամ նուազ ճոխութեամբ մը, դպրոցներու յատուկ հրատարակութիւններով ու իրագիտական հաւաքածոյներով:

Մարմնամարզի սրահ մը, վարժարանի մը պարտաւորիչ տարրերէն մէկը կը կազմէ:

ուր տղայք՝ ամառը առանց նեղուելու արեգական կիզիչ ճառագայթներէն, ու ձմեռը սաստկաշունչ քամիներէն, կարենան յարատեւել իրենց փորձերը որ այնքան օգտակար են իրենց մարմնական առողջութեան:

Ձգուշանալով հանդերձ բարդելէ յարկ յարկի վրայ, եթէ տեղւոյն տարածութիւնները մեղ չի ներեն, կարելի է գետեղել գետնայարկին մէջ Տնօրէնութեան սենեակը, հիւրասրահը, դռնապանին խուցը, ինչպէս նաեւ ճաշասրահները և դասատուաց յատուկ սպասարահ մը եւ այլն, առաջին յարկին մէջ դասարանները, իսկ վերի յարկին մէջ ալ վարժարանին պէտք եղած մնացեալ մասերը:

Առողջապահական պայմաններուն գալով, հողը իր բնութեամբ խոնաւութեան անաշառ շտեմարան մը ըլլալուն, կը փոխանցէ զայն իրեն շուրջը գտնուող ամէնէն մօտիկ առարկային. մեր շէնքն ալ, որպէս ամէն շէնք, հողին անմիջապէս առնթրեակաց ըլլալուն՝ անկէ խոնաւութիւն ստանալու վտանգին ենթակայ է: Պէտք է ուրեմն հողին ու գետնայարկին միջև անշրպիտներ գտնուին, հողէն վեր իրարու հակադիր պատահաններով հովահրուած, որպէս զի օդի հոսանք մը անդադար վանէ հողէն բղխած խոնաւութիւնը, առանց շէնքին հասցնելու: Միեւնոյն ժամանակ պատերը՝ իբր լաւ հաղորդիչ մարմիններ, որպէս զի այս խոնաւութիւնը չի փոխանցեն շէնքին վերի յարկերուն, պէտք է որ հողին երեսէն անմիջապէս վեր կուպրի (bitume) հորիզոնական խաւ մը զատէ ու չեզոքացնէ պատերուն ստորերկրեայ մասերը:

Նմանապէս ծովու աւաղջ իր մէջ խոնաւութենէ զատ կը պարունակէ նաեւ աղային տարերքներ, որոնք բաղադրուելով չաղախին մէջ դրուած կիրին հետ, կ'արտադրեն պատերուն փտտումը փութացող փխսակար մարմիններ: Ուստի գետերու անուշ ջուրի աւազը պիտի գործածենք մեր պատերուն ու ձեփերուն համար:

Մեր վարժարաններէն չատերուն սեմէն ներս ընդհանուր գարշահոտութիւն մը տակն

ուլրայ կընէ այցելուին քիմքը, աւելորդ է ըսել թէ ճեմիչներն իրենց յարատեւ աղտոտութեամբը ու դասարանները իրենց հեղցուցիչ մթնոլորտովը կարեւոր դերը կը խաղան այս անհաճոյ բուրումին մէջ, վասն զի կարեւորը միշտ պակսած է, ջուրը ճեմիչներուն համար, իսկ օդը դասարաններուն:

Ջուրը ճեմիչներուն մէջ առտու իրիկուն որոշեալ քանակութեամբ մը պիտի հոսի, ոչ այնպէս, որպէս կընեն մեր միամիտ տնտես ախպարները, օրը մէկ անգամ թոյլ մը ջուր թափելով:

Ճեմիչներուն պատերը գետնէն իբր մէկ մէթ բարձրութեամբ մարմար տախտակներով պատած պիտի ըլլան, այս քարերուն վերեւ ծակոտկեայ խողովակ մը հաստատուած պիտի ըլլայ, ուսկից ջուրը լռիկ մնչիկ պիտի հոսի ամէն ժամանակ, չափը միշտ մեր ձեռքը ըլլալու պայմանաւ: Գործարանին բուն քարը փոխանակ մարմարի՝ պիտի ըլլայ երկաթէ ինքնաշարժ դրութեամբ, chasse d'eauով, ու Տ խողովակով, այնպէս որ ամէն անգամ երբ աթոռակէն վար իջնուի, ջուրը ինքնին հոսի մաքրելով ամէն բան առանց գործարան մտնողին հոգածութեան, զի հակառակ ամէն պատուէրի՝ աչակերտը երբեք չպիտի մտածէ պէտք եղած կերպով տեսնել իր գործը: Ճեմիչներուն մօտ պէտք է գտնուին նաեւ միջանոցներ, առանձինն բաժանումներու վերածուած, մարմար և կամ քարէ տախտակներու միջոցաւ. ասոնց բարձրութիւնը աղայոց հասակին համեմատ ըլլալով, դարձեալ ծակոտկեայ խողովակներու միջոցաւ ջուրը անդադար պիտի հոսի քարերուն երեսէն:

Տասը տղու մէկ ճեմիչ և մէկ միզարան նուազագոյն բաշխում մը կրնայ համարուիլ: Ճեմիչներուն մօտ պէտք է գտնուին նաեւ ծորակներ աղայոց լուացուելուն յատկացեալ, իսկ ջուր խմելու աղբիւրները բոլորովին հռու պիտի դետեղուին այս չըջանակէն:

Ճեմիչները շէնքին հիւսիւսային կողմը ուղղել՝ լաւագոյն լուծումներէն մէկը կըրնայ համարուիլ, ամառը հարաւային տաք մթնոլորտը գարշահոտութիւն արտադրելուն համար: Նմանապէս ճեմիչները անջատուած

ըլլալու են չէնքին մնացեալ մասերէն, բո-
լորովին դուրս նրբանցքով մը միացած և
կամ թէ՛ ռասին վրայ, առանց սակայն հսկո-
ղութեան դժուարութիւններ ստեղծելու,
վասն զի աշակերտաց ժամանցը ճեմիչներուն
մէջ պէտք է անվրէպ հսկողութեան առար-
կայ դառնայ:

Դալով դասարաններու առողջապահու-
թեան խնդրոյն՝ սա նուազ անտեսուած մա-
սերէն մէկը չէ մեր վարժարանաց մէջ. եր-
կայն ու քառակուսի դասարաններ չինելը
չառ փնտռուած դրութիւն մը չէ, քանի որ
աշակերտաց դիրքը միեւնոյնը չի մնար հան-
դէպ դասատուին ու սե տախտակին, ետին
մնացած կարգերը տախտակը լաւ չեն տես-
ներ ու դասատուն ալ զանոնք լաւ չի կրը-
նար դիտել. ուստի քառակուսի կամ նոյն
խոկ կիսաբոլորաձև դասարանները ամենէն
նախամեծարները պիտի նկատուին:

Դասարանները բոլորովին հարաւի կողմը
ուղղելով՝ ամրան մէջ տղայք չափազանց պիտի
նեղուէին տաքութենէն, իսկ ձմեռ ժամա-
նակ ցուրտն ու խոնաւութիւնը պիտի խան-
գարէին աշակերտաց ոողջութիւնը, եթէ այս
դասարանները ընդհակառակը բոլորովին
հիւսիսի կողմը զետեղուած ըլլային: Միջին
դիրք ուրեմն միշտ նախամեծար պէտք է
համարել. այսպէս, դասարանները պիտի
ուղղենք հիւսիսային արեւմուտք կամ հա-
րաւային արեւելք և փոխադարձաբար:

Դասարաններու տարածութեանց տեսակէ-
տով՝ իւրաքանչիւր աշակերտի մէկ ու կէս
մէթր քառակուսի տեղ պիտի տանք, ասոր
մէջն ըլլալով դասարանին նրբանցքները ու
դասատուին գրաւած տեղը, այնպէս որ,
15 մէթր քառակուսի տարածութիւն ունե-
ցող դասարանի մը մէջ տասը աշակերտէ ա-
ւելի պէտք չէ տեղաւորել:

Դալով դասարաններու բարձրութեան,
սա այնպէս մը պէտք է որոշուած ըլլայ որ
իւրաքանչիւր աշակերտի 6 մէթր խորանարդ
օդ առնուազն բաժին իյնայ:

Յայտնի է թէ տաքցած մթնոլորտի մը
տեսակարար կշիռը թարմ ու մաքուր օդին
կշիռէն աւելի թեթիւ ըլլալուն, աղտոտ հո-

սանքները դէպի առաստաղները կը ձգտին.
այս պայմաններուն մէջ կարեւոր է որ դա-
սարաններուն առաստաղին վրայ փողոցին
հետ հաղորդակցութիւն ունեցող ծակոտիկ-
ներ գտնուին, դուրս վանելու համար դա-
սարաններէն վեր բարձրացած աղտոտ մըթ-
նոլորտը, երբ ձմեռը սաստիկ ցուրտին չենք
կրնար կատարելապէս օգտուիլ պատուհան-
ներու բացուածքէն: Միւս կողմէ, պար-
պուած օդին տեղը լեցնելու համար, պէտք
է միեւնոյն ծակոտիկներէն բանալ պատերուն
ստորին մասերուն մէջ, դուրսի մաքուր օդը
դէպի ներս ներարկելու համար: Դասարան-
ներուն պատուհանները տղայոց գլխէն վեր
պիտի զետեղուին որպէս զի դուրսի անցու-
ղարձը չի գրաւէ անոնց միտքը, ու ընդհա-
կառակը տղայք կեդրոնացնեն իրենց ուշադ-
րութիւնը սեւ տախտակին վրայ կամ դա-
սատուին ուղղութեան:

Լայն բացուածքով ու բարձր դիրքով
պատուհաններ՝ ստորաբաժանումներու վերած-
ուած՝ միշտ նախընտրելի պէտք է համար-
ուին, լոյսի խնդրոյն մէջ կարեւոր դեր մը
խաղալուն:

Ամենուս գիտցած բանն է որ լոյսը պէտք
է դայ աշխատողին ձախ կողմէն. մի և նոյն
ժամանակ հաստատուած է որ աջէն, եփեւէն
և կամ բաղմափողմանի ուղղութեամբ լոյսեր
անխուսափելի կերպով կը յիւսան աշխատո-
ղին տեսութեան գործարանին. ուրեմն լոյսի
հակառակ ուղղութեան մէջ գտնուած պա-
տուհանները կա՛մ պէտք է ջնջել և կա՛մ ա-
նոնց յիւսանալար աղբեղութիւնը չեղոքացնել
փեղկերու միջոցաւ:

Դասարանները չէնքին միւս մասերուն
հետ հաղորդակցութեան մէջ պիտի գտնուին
ոչ թէ նրբանցքներով, այլ ընդարձակ սրահի
մը միջոցաւ որ իւր դրօսատեղի պիտի ծա-
ռայէ աշակերտաց, երբ անձրեւէ. ուստի այս
սրահը պէտք է ուղղակի դուրսէն առնէ իր
լոյսն ու օդը, որպէս զի կարենայ կաղդու-
րել, դասարաններէ ելքին, աշակերտաց յոգ-
նած միտքերը:

Վարժարանական առողջապահութեան մէջ
նկատի առնուելիք կարեւորագոյն խնդիր-

ներէն մէկն ալ ձմեռ ժամանակ շէնքին դա-
նազան մասերը տաքցնելու պարագան է:
Շնչառութեամբ տաքցած աղտոտ օդը իր
թունաւորիչ ազդեցութեամբ կ'արգելէ մա-
նուկ հասակներու զարգացումը. անհերքելի
անպատեհութիւն մըն է այս, որմէ բացար-
ձակապէս պէտք է զգուշանանք, ուստի զո-
հողութիւն պէտք չէ խնայել վարժարաննե-
րու մէջ մաքուր օդ միշտ տրամադրելի ու-
նենալու համար: Մանաւանդ ձմեռ եղանա-
կին մէջ այս տեսակէտներով Բալօնփէռի
դրութիւնը ամենէն նախընտրելին է դասա-
րանները տաքցնելու համար. նախընտրելի են
տաք ջրով քալօնփէռները որոնք միեւնոյն
ժամանակ օդին բաղադրութեան մէջ անփո-
փոխ կը պահեն մարդուս շնչառութեան ամե-
նէն կենսական տարրը եղող ջրածինի քա-
նակութիւնը և այլն:

ԱՐԱՍ ԹԱՅԹԱՃԵԱՆ

Ծ. Խ. — Սոյն մասնագիտական յօդուածը
ստացած ու յանձնած էինք արդէն տպարան,
երբ երեքշաբթի օրուան Բիւզանդիոնի մէջ
կարդացինք Յովհ. էֆ. Թաւշանճեանի մէկ
նամակը՝ որ Մայր-վարժարանի շինութեան
վերաբերմամբ մեր թերթերուն մէջ նախա-
պէս հրատարակուած լուրը կը ճշդէ: Ուրա-
խաբիթ է տեսնել որ, կրթութիւն ու գրասէր
վաճառականին նամակը հերքում մը չէ, այլ
հաստատութիւն մը, ինչպէս կը յուսայինք
արդէն: Միայն թէ Թաւշանճեան էֆ. կը
յայտարարէ որ, այդ երկսեռ վարժարանին
վերաշինութեան բովանդակ ծախքը կէս առ
կէս հայթայթել յանձն առած է՝ Բարիդա-
նակ Աթանազիոնէ էֆ. Էֆենեանի հետ,
ինք առաջարկած ըլլալով այս վերջնոյն ու-
սանոր հաւանութիւնն ստացած: Լսուածին
նայելով, կրթական այդ վաղեմի հաստա-
տութեան ի նորոյ կառուցումը մօտաւորա-
պէս 3000 ոսկիի կը կարօտի, որով Տեւք
Թաւշանճեան եւ Էֆենեան կը նուիրեն
1500 ազան ոսկի:

Իրողութիւնը ինքնին այնքան բացորոշ
ու պերճախօս է, որ խորհրդածութեան պէտք

չի թողուր, ծանօթ ըլլալով մանաւանդ
նուիրատուներուն համեստութիւնը՝ բարերա-

Թաւշանճեան էֆ. ի նամակէն կը հասկըց-
ուի որ, տասն ամիսէ ի վեր արդէն յայտ-
նած էր այս պատրաստակամութիւնը Ս.
Պատրիարք Հօր, բայց փափագող չէր հրա-
տարակուելուն, լաւագոյն սեպելով որ շի-
նութիւնը կատարուելէն վերջը միայն յայտ-
նուի: Եւ ճիշդ այս տեսակէտով էր որ, երբ
Մայիսի 30րդ թիւին մէջ իր հրատարակած
նամակովը մասնագէտներու հրապարակային
կարծիքը կը հարցնէր, որ և է ակնարկու-
թիւն չկար թէ ինքն իսկ եղած ըլլայ այդ
շինութեան նախաձեռնութիւնն ստանձնողը
և ծախքին կէսը հայթայթողը: «Արդ, հիմայ
«որ այլեւս պէտք չէ մնացած գաղտնապա-
«հութեան ձեւերու դիմելու, — կը գրէ Թաւ-
«շանճեան էֆ. Բիւզանդիոնի մէջ, — պիտի
«ըսեմ որ այլևս բոլորովին աւելորդ է լը-
«րագրաց էջերը շէնքի մը յատակագիծերովը
«լեցնել: Պիտի խնդրեմ սակայն որ, եթէ
«կայ մէկը որ իրապէս ձեռնհաս է և կը
«կարծէ գիտնալ բան մը որով դպրոցին չէն-
«քը աւելի առողջապահիկ և աշակերտներու
«նպաստաւոր պիտի ընէ, այդ անձը բարե-
«հաճի ուղղակի ինծի դրկել իր գրելիքը և
«այսպէսով ծառայութիւն մը մատուցանել իր
«համայնքին մանկուոցն»:

Պիտի շատանանք ուրեմն յաջորդ թիւով
հրատարակել Արամ էֆ. Թաւթաճեանի յօդ-
ուածին երկրորդ եւ վերջին մասը, քանի որ
անգամ մը սկսած ենք: Չենք կարծեր, սա-
կայն, որ իր գրուածքը մեռեալ տառ մնայ,
ինչպէս կ'ըսէ իր յօդուածին սկիզբը, ակնար-
կելով ճարտարապետներու կողմէ հանրային
խնամակալ մարմիններու ներկայացուած ծրա-
գիծներուն, եկեղեցական կամ դպրոցական
շինութեանց առթիւ, «որոնց նկատառումը կամ
ընդունելութիւնը շողոքորթութենէ կախում
ունեցած է»: Պարագան բոլորովին տարբեր է
այս անգամ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ամերիկացի միլիոնատերներու շուայրութեանց ու քմահաճոյքներուն վրայ սա հետաքրքրաշարժ տեղեկութիւնները կը հաղորդէ Նիւ Եօրքէն եւրոպական թերթի մը ուղղուած նամակ մը։—


Թուանշաններու մեծութիւնը կարեւորութիւն չունի հոն։ Ոչ ոք կը զարմանայ լսելով որ Վանտերպիլը 200,000 ֆր. կը ծախսէ օթոմոպիլի մը, և տիկին Բլէրէնս Մէքէյնոյն գումարը կը ծախսէ միակտուր մարմարէ փորուած լոգարանի մը համար։ Երբ Բլարք ծերակուտական իր Նիւ Եօրքի նորակառոյց ապարանքին անագապղինձէ զարդերուն համար, անագապղինձի հինգ մեծ ձուլարան ծախու կ'առնէ, և ասոնք ալ գիշեր ցերեկ այդ զարդերը ձուլելով կը զբաղին, և երբ հարուստ ամերիկացի մը տարին 50 միլիոն կը ծախսէ Ակումբին մէջ (թղթախաղի համար) և 200 միլիոնէն աւելի ծախք կ'ընէ նաւային զանազան զբօսանքներու համար, ոչ ոք կը զարմանայ, զի ամէն ոք սովորած է այդպիսի բաներ լսելու։ Նիւ-Եօրք աշխարհիս մէջ միակ քաղաքն է ուր այնպիսի ճաշեր կը տրուին որոնց ամէն մէկ ձեռք սպասարկութիւնը (այսինքն ամէն անգամու պնակ փոխուիլը) 25,000 ֆրանք կ'արժէ, ուր հրաւիրեալք 400 ֆրանք նուէր կուտան սպասարկու — ծառաներուն, ուր մէկ շահճարամի համար 1,000 ֆր. կը վճարեն. ուր օթէլ մը 40,000 ֆրանք արժէք ունեցող անկողին մը կրնայ ունենալ։ Նիւ Եօրքի միլիոնատէրներու թաղին մէջ անլուր և աներեւակայելի շքեղութեամբ կահաւորուած օթէլներ, ճաշարաններ և սրճարաններ կառուցուած են 200 միլիոնէ աւելի ծախքով և լաւ հասոյթ կը բերեն։ Տէլմոնիքօյի խոհարարպետը որ տարեկան 40,000 ֆր. վարձք կ'ընդունի, 25 տեսակ կերակուրով ճաշացուցակ կը պատրաստէ, իւրաքանչիւր տեսակը 200 ֆր. և աւելի արժէքով։ Ասոնցմէ զատ բազմաթիւ ճաշարաններ և օթէլներ կան որոնց մէջ եղանակին ատեն մէկ ճաշագինը 2—400 ֆրանք է։

Պարահանդէսի մասին մեծ համբաւ հանեց «Էքիզապլ» զեղծ ընկերութեան դեր — նախագահն անցեալ ձմեռ «Ճիմի»ի մէջ սարքած հանդէսովը. միմիայն ճաշին համար 60,000 ֆրանք ծախք ըրաւ։ Պարասրահն այնպէս իմն զարդարուած էր որ Վէրսայի դարաստանին դալարեաց վրայ կանգնուած ամառնային տաղաւարի մը կը նմանէր, և որուն հովանիին տակ ելեկտրական լոյսով լուսաւորուած հարիւրաւոր վարդեր կային, ամենքն ալ դեռ նոր բացուած։ Այսպիսի զարդարանքներու համար ծախսուած գումարն անհաշուելի ըլլալու չափ մեծ է։

Նշանաւոր տիկիները իրենց շնիկներուն համար ալ առասպելական գումարներ կը ծախսեն. այս տիկիներէն մէկը վերջերս 8000 ֆր. արժէքով վզի փոկ մը պատրաստել տուաւ իր շանը։ Ուրիշ մըն ալ իր սիրած շունին համար տուն մը շինել տուաւ Աննա իշխանուհոյն համբաւաւոր գլեհկին նմանութեամբ, ծանրագին գորգերով, վարագոյններով և ալ կահկարասիներով։ Յատկապէս այդ շանը համար բռնուած «վարժուհի» մը ամէն օր այցելութեան կ'երթար շունին, զայն լուալու, սանտրելու, գանգրելու, անուշանոտ իւղերով օծելու և պաշտօնցնելու համար։ Անասունին ուտելիքներն ու ջուրն արծաթեայ սպասներով կը տրուէին։— Դառնանք վերստին այրերուն և իրենց կանանց։ Մանրագին հայիւներով ապացուցուած է որ Նիւ Եօրքի մէջ իբր 6000 տիկիներ տարեկան 25,000ական ֆրանք կը ծախսեն իրենց արդուզարդերուն համար։ Չար լեզուներ կ'ըսեն թէ այդ կիները հակառակ իրենց շքեղ արդուզարդերուն՝ դարձեալ փայտէ պուպրիկներու կը նմանին։

Տիկին Անտէրսընի զգեստներուն ճոխութեան պէս նշանաւոր է նաեւ այն ճաշը զոր Սր. Ուիլեմս Վալտորֆ Ասդոր տուաւ անցեալ ապրիլին Գահիրէի մէջ։ Հրաւիրեալք քառակուսի մեծ սեղանի մը շուրջ, եւ ամէն մէկ կողմն եօթնական հոգի նստան։ Սեղանին վրայ ներկայացուցած էր անապատը։ Շաքարի փոշիով նմանցուած էր սպիտակ անապատ երկիրը, իբրեւ աւազէ, որուն վրայ

փոքրիկ մարդեր կարաւան մը կը ձեւացնէին: Մէջանգը կը տեսնուէր փոքրիկ ուլասիւրը, փոքրագոյն արմաւենիներով, քիչ մը հեռուն բուրգերը, Սրինքսը, Նեղոսը և գետին մէջ ալ փոքր նաւակներ, բնիկ նաւավարներով: Պաղպաղակէն ետք, ճաշասրահ բերուեցաւ ոսկեղէն բաժակ մը, ոսկիէ բրդիներով եւ թիւերով: Սեղանակիցներն հրաւիրուեցան պեղումներ, խուզարկութիւններ ընել անապատին մէջ (շաքարի փոշիէ անապատին մէջ), եւ ամէն անգամու «խուզարկութեան» ատեն հին եգիպտական ոսկեղէն հնութիւններ երեւան կ'ելլէին հազարաւոր ֆր. արծէքով: Հրաւիրեալք այդ թանկագին առարկաներն իբր յիշատակ իրենց հետ տարին: Հօռարտ Կուլտ, բոլորովին տարբեր վաւափրոտ Ասդօրի ճաշակէն, այսինքն՝ նուազ մսխող, աւելի տեւական, բայց ոչ նուազ օգտակար բաներու կը ծախսէր զբամը: Իր ազարակին մէջ մէկ միլիոն ֆրանքէ աւելի ծախսելով կովի ախոռ մը շինել տուաւ, եւ գրեթէ նոյնչափ գումար մըն ալ տուաւ ընդարձակ հաւնոցի մը շինութեան: Հաշիւ եղած է որ միլիոնատիրոջ հաւերուն ածած իւրաքանչիւր հանկիթը 20 ֆր. ապրանք եղած է իրեն: Աւատիկ ուրեմն հաւեր որք ոսկի կ'ածեն: Ֆիլատելֆիոյ մէջ ձիու վերջին ցուցահանդէսին շատ խօսուեցաւ Շիքակոյի Մուր միլիոնատէրին վարած կեանքին վրայ: Օրական 400 ֆր. կը վճարէր օթէլին մէջ ընակած սենական համար եւ օրական 800 ֆր. կուտար կերակուրի: Երկու օրն անգամ մը հացկերոյթ կը սարքէր, եւ իւրաքանչիւր սպասի համար 250—300 ֆր. կը վճարէր պանդոկապետին: Օրը 3—400 ֆր. ի ծաղիկ կը գնէր, և որովհետեւ գրելէ ձանձրոյթ կը զգար, իր ամէն գործերը հեռաձայնով կը կատարէր եւ օրական մէկ քանի հարիւր ֆր. կը վճարէր հեռաձայնի համար: Իսկ զօսանքներու համար օրական 4000 ֆրանք կը ծախսէր:



Պիոս Ժ. Պապին ներքին կեանքէն.

Պապը առտուն կանուխ կ'ելլէ անկողնէն: Ժամը 5ին, արդէն իսկ թուրքի վրայ կը

գտնուի, և նոյն իսկ աւելի կանուխ՝ ամառ ատեն: Շատ աշխոյժ, առանձին կ'ելլէ անկողնէն, եւ կը սկսի աղօթագիրքը կարդալ, իր յարկաբաժնին մօտ գտնուած կալըրիներուն կամ վատիկանի պարտէզներուն մէջ պտըտելով: Ժամը 6ին պատարագ կ'ընէ, պապարկութեամբ իր երկու անձնական քարտուղարներուն եւ մատուռին երէցներուն: Այսքան կանուխ մատուցուած պատարագին չեն կրնար ներկայ գտնուիլ Հռոմի կիները, որոնք ժամը 4ին անկողնէն ելլելու հարկադրուած են, պատարագին հասնելու համար:

Պիոս Ժ. պատարագը աւարտելէ յետոյ, սովորաբար կը ծնրագրէ իր աղօթարանին վրայ և իր կարգին ներկայ կը գտնուի մատուռան երէցին կողմէ մատուցուած պատարագին: Յետոյ նախաճաշ կ'ընէ իր անձնական յարկաբաժնի ճաշարանին մէջ, որ վատիկանի երրորդ յարկը կը գտնուի:

Իր երկու քոյրերը և անոնց աղջիկներէն մէկը, զորս Հռոմ բերել տուած է, եթէ երբեք պատարագի ներկայ գտնուին, ինչ որ կը պատահի յաճախ, անոնց հետ կ'ընչէ: Նախաճաշը կը կատարէ կաթախառն սուրճով կամ զուտ կաթով: Յետոյ աղօթագիրքը կը կարդայ և կը սկսի խորհիլ, վերէն վար պտըտելով մինչեւ ժամը ճիշդ ութը, երբ իր աշխատութեան սենական կ'երթայ: Իր անձնական նամակները, առտուն բերուած պապական ցրուիլին կողմէ, գրասենյակին վրայ դրուած են: Կ'ուզէ ինք աչքէ անցընել բերուած այդ նամակները: Իր նախընտրած անձնական քարտուղար մոնսէնսէօր Պրէսան կը բանայ պահարանները և անոնց մէջ գտնուած նամակները կը յանձնէ Պապին: Մէկ ակնարկով կը քննէ, մակագրութիւն մը կ'ընէ. կամ վար կը դնէ՝ աւելի ուշադիր քննութենէ մը անցընելու համար, և կամ թէ կողովը կը նետէ: Շատ շուտ կը տեսնէ նամակներուն գործը: Ընդհանրապէս ժամը 9ին կ'աւարտէ այդ գործը: Յետոյ սպասարկու եկեղեցականին կողմէ կը ծանուցուի գալուստը արտաքին գործոց նախարար Մէրրի տէլ Վալ կարդինալին, որ իբ

հետ կը բերէ հեռագիրները, պապական նուիրակներու տեղեկագիրները, դեսպաններու ծանուցագիրները, 225 միլիոն կաթոլիկներու հոգեւոր գործերուն վերաբերեալ թըղթածրարները:

Ժամը տասնուկէսին, կ'աւարտի այդ գործն ալ: Այնուհետեւ Պապը կ'ընդունի այն կարօրնալներէն մէկը, որոնք կրօնական գործերու վերին հսկողութիւնը կը կատարեն, ինչպէս կրօնական միաբանութեանց վերատեսուչը, բրորականտայի վերատեսուչը և այլն: Ատոնցմէ իւրաքանչիւրը ունի իր ընդունելութեան օրը: Յետոյ կը հասնի ունկնդրութեանց ժամը, Պապին սենեկապետ մօնսէնէօր Պիսլէթիի միջոցաւ խնդրուած: Նախ մասնաւոր ունկնդրութիւնները կը կատարուին, ինչպէս Հռոմ եկող եպիսկոպոսները, քաղաքական և նշանաւոր անձնաւորութիւնները կ'ընդունուին: Յոյնի մը կը յաջորդէ Լեհ մը, անոր ալ՝ Սմերիկացի մը, և այս վերջինին ալ՝ Գերման մը: Մասնաւոր ունկնդրութիւններէն յետոյ կարգը կուգայ երեք-չորս կամ աւելի հոգիներէ բաղկացած խումբերու ընդունելութեան: Ժամը երկուքին, վերջ կը գտնեն ունկնդրութիւնները, ու Պապը կը ճաշէ մօնսէնէօր Պրէսանի հետ: Հակառակ արարողական սովորութեան, Պապը առանձին չի ճաշեր:

Ճաշէն յետոյ Պիոս Ժ. չի քնանար բնաւ: Իր քարտուղարին հետ Ռաֆայէլ կալըրիին մէջ կը պտտի, ղանաղան գործերու վրայ կը խօսակցի, յետոյ ուրիշ կալըրիներու մէջ կը շրջագայի, ուր բաղմամբիւ հաւատացեալներու կը հանդիպի, որոնք հոն հաւաքուած են, իր օրհնութիւնը ընդունելու համար: Եթէ այդ հրապարակային ունկնդրութենէն ատեն մնայ, քիչ մը մարդանք կը կատարէ Վատիկանի պարտէզներուն մէջ: Յետոյ, ժամը 5 ու կէսին, նորէն աշխատութեան սենեակը կը դառնայ, ուր նոր ունկնդրութիւններ կը շնորհէ, բայց այս անգամ հրաւիրուած մարդոց, Վենետիկի կամ Հռոմի մէջ ունեցած բարեկամ մարդոց: Մինակ մնալուն պէս կը կարգայ, նօթեր կ'առնէ, կը խմբագրէ, հաճոյք կը զգայ գրելէն եւ գրասենեակէն չի բաժնուիր ժամը 9 ու կէսէն առաջ:

Ամէն իրիկուն, գործը աւարտելէն յետոյ, անձնական տետրակի մը մէջ կը նշանակէ այդ օրուան վերաբերեալ դիտողութիւնները: Յետոյ, քարտուղարը կը կանչէ եւ յաջորդ օրուան համար հրամաններ կուտայ:

Ժամը 10ին, իր սպասարկուները կը ճամբէ: Պապը կը պառկի, աղօթելէ եւ թեթեւ նախընթրակ մը ընելէ յետոյ:

Պիոս Ժ. իր նախորդին պէս ընթերցում չըներ, որուն համար այնքան կը տրտնջար իր անձնական հմուտ բժիշկը, Տօքթ. Լաբոնի: Լէոն Ժ.Գ. սովորութիւն ունէր աչքէ անցընելու լրագիրները, պառկելէ առաջ. ընդհանրապէս այդ ընթերցումը կը խանգարէր քունը:

Լէոն Ժ.Գ. մինակ կը պառկէր իր յարկաբաժնին մէջ: Պիոս Ժ. ընդհակառակը, կ'ուզէ որ իր երէցներէն մէկը իր մօտ գտնուի: Այս մասին Պիոս Ժ. ըսած է. «Կ'ուզեմ աւորինակ հանդիսանալ: Եթէ երբեք յանկարծ տկար զգամ ինքզինքս, չեմ ուզեր որ հոգիս աւանդեմ, առանց ընդունելու Եկեղեցիի խորհուրդները»:

Ձուարճալի մանրամաս մը կը պատմուի Սպանիոյ Ալֆոնսօ թագաւորին ի Բարիդ վերջին այցելութեան առթիւ: Երիտասարդ Վեսհապետը Օթէլ Պրիթօլ իջած էր, Լա Բէ փողոցին մօտ, և իր պարապոյ ժամերուն քաղքենիի հագուստով կը պտտէր այդ փողոցը, որ ծանօթ է իր վաճառատուններու վայելչութեամբ եւ շքեղութեամբ, և գնումներ կ'ընէր հոնկէ: Ն. Վեսափառութեան նոյն շուկային մէջ երեւումը բնականաբար բաւական իրարանցում եւ հետաքրքրութիւն կը պատճառէր, մասնաւորապէս վաճառատանց մէջ ծառայող օրիորդներուն, որոնք դուռներն ու պատուհանները կը դիմէին տեսնելու համար երիտասարդ Վեսափետին անցնելը: Առտու մը երեք պարոններ այդ փողոցի նորոյթի վաճառատուններէն մէկը մտան, և իրենցմէ ամէնէն երիտասարդը գլխարկ մը գնել ուզեց: Վաճառատան պաշտօնէն մը, իրրեւ ամենաբնական բան մը, կատարեալ քաղաքավարութեամբ խնդրեց

իրենցմէ որ վայրկեան մը սպասեն, որովհետեւ այդ միջոցին Սպանիոյ թագաւորը կ'անցնի, ըսաւ, և վաճառորդ օրիորդները զայն դիտելու զբաղած էին: Ասոր վրայ այցելուններու դէմքին վրայ նշանակալից ժպիտ մը նկարուեցաւ. ասիկա բաւական եղաւ գուշակելու թէ նոյն ինքն Սպանիոյ Վեհապետը կը գտնուի վաճառատան մէջ. վաճառորդ աղջիկներն անմիջապէս այն կողմ փութացին, եւ չըջապատեցին Ալֆոնսօ թագաւորը եւ իր ընկերները, մինչ միւս կողմէ մեծ լուրն իմաց կը տրուէր վաճառատան տիրոջ: Ասիկա հաղարապատիկ աւելի բաղդաւորութիւն մըն էր անշուշտ քան փողոցէն անցած ատեն դիտելը. մանաւանդ թէ ի՛նչ մեծ պատիւ, որ Սպանիոյ Վեհապետն այսպէս կ'այցելէր իրենց վաճառատունը: Եւ ճիշտի մեծ եղաւ ուրախութիւննին, երբ վաճառատան տիրուհիին յարգալից և հակիրճ բառերով ըրած քաղաքավարական սիրուն խօսքերուն ի պատասխան, Ն. Վեհափառութիւնը ըսաւ. «Դիւարկները տեսնել կը փափաքեմ. երեք գլխարկ կ'ուզեմ գնել, մէկը մօրս համար, բոլորովին նոր ոճով, միւսը քրոջս եւ երրորդն ալ հօրաքրոջս համար: Կը խնդրեմ, երեքը մէկէն հաճեցէք մէկ տուփի մէջ դնել:» Ասոր վրայ, վաճառատան լաւագոյն գլխարկները բերուեցան, որոնց մէջէն ընտրութիւնը բաւական երկար տեւեց, որովհետեւ երիտասարդ Վեհապետը երեքը վարժուած չէր այս տեսակ աշխատութեանց. այն աստիճան որ Ալֆոնսօ թագաւոր պահ մը վարանոտ մնալով գոչեց. «Իրաւ որ կեանքիս մէջ այսքան դժուարին կացութեան մը մէջ գտնուած չէի»: Վերջապէս ընտրութիւնը կատարուած էր, և Ալֆոնսօ թագաւոր յանձնարարելէ ետք որ գլխարկները շուտով պանդոկ ղրկուին, քանի որ իր մեկնումը մօտ էր, դուրս ելաւ վաճառատունէն, հիացիկ տպաւորութեան մը տակ թողլով վաճառատան տիրուհին և վաճառորդ օրիորդները:

ՍԵՊՈՒՇ ԷՖ. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆԻ ՍՍՅԸ

Վերջին պահուն խորին ցաւով կ'իմանանք թէ, Քաղաքական ժողովի անդամ Սեպուհ Էֆ. Տէմիրճիպաշեան, որ թոքատապէ կը տառապէր, բժշկական ամէն խնամքներու հակառակ մեռեր է՝ Ենիգիւղ, իր բնակարանին մէջ: Սեպուհ Էֆ. ի մահուամբ՝ Աղգ. Վարչութիւնը կը կորսնցնէ իր կարող ու արժանաւոր անդամներէն մէկը:

Հանգուցեալը ծնած էր Խասգիւղ, և իր նախնական կրթութիւնը գիւղին Ս. Ներսէսեան վարժարանին մէջ ստանալէ ետքը, 1857ին Բարիդ գացած էր և բաւական ժամանակ ուսմանց հետեւած՝ հանգուցեալ Նուրեհան Էֆ. ի, ինչպէս նաեւ Պէկեան Թաղէոս Էֆ. ի հետ: Կ. Պոլիս վերադարձին, մասնակցած էր իր հօրը՝ Ենովք Էֆ. Տէմիրճիպաշեանի սեղանաւորական գործառնութեանց, զոր յետոյ իր հղբօրը՝ Խոսրով Էֆ. Տէմիրճիպաշեանի հետ (անդամ Տնտեսական Խորհուրդի) չարունակեցին պատուաւորապէս, միեւնոյն ժամանակ հայթայթին ըլլալով Սպարապետի Դրան: Տէմիրճիպաշեան Սեպուհ և Խոսրով Էֆ. ները՝ թէ՛ իրենց առեւտրական ու սեղանաւորական գործառնութեանց մէջ և թէ՛ Պատրիարքարանի Ժողովներուն մէջ իրենց ունեցած մասնակցութեամբը՝ յարգանք ու համակրանք գրաւած են միշտ, անձնական բնաւորութեամբ ալ ըլլալով ազնիւ ու բարեհամբօյր: Սեպուհ Էֆ. Տէմիրճիպաշեանի մահը խոր սուգով կը համակէ իր յարգելի եղբայրը՝ Խոսրով Էֆ. ն, ծերունի մայրը եւ քոյրերը, որոնց կը յայտնենք մեր վշտակցութիւնը:

Հանգուցեալը 70 տարեկանի մօտ էր եւ ամուրի:

Կայս. Կառավարութեան կողմէ պատուած էր Միւթէմայիզի աստիճանով եւ Գ. կարգի Մէճիտիէ պատուանշանով:

Յուդարկաւորութեան տխուր հանդէսը կը կատարուի այսօր (Ուրբաթ), Ենիգիւղի Ս. Աստուածածին եկեղեցին, ուր առաւօտուն Հոգեհանգստեան պատարագ կը մատուցանէ Տ. Դէորդ Եպիսկ. Երէցեան:

ՄԱՍԻՍԻ գաւառային բաժանորդներէն և գործակալներէն անգամ մըն ալ կը խնդրենք որ իրենց անվճար բաժանորդագիրներուն առաքումը և գործակալական հաշիւներուն կարգադրութիւնը փութացնեն: Ինչպէս նախորդ յայտարարութեամբ մը շեշտած ենք, թերթին հրատարակման կարճատեւ մէկ ընդհատումը չի խանգարեր բնաւ այդ հաշիւները և իւրաքանչիւր բաժանորդ իր վճարած կամ վճարելիք 50ական դրուշին փոխարէն, իրաւունք ունի 52 թերթ ստանալու: Ուրեմն Մասիսի ներկայ 33րդ թիւը ստանալով, այսքան թերթ ապագոյ ստացած կ'ըլլան իրենց բաժանորդագիրը դեռ չի վճարած բաժանորդները, որով ներկայ տարեւըջանի համար մնացեալ 19 թիւերը ևս ստանալնուն ապահով ըլլալով՝ հասցնելու են մեզ իրենց բաժանորդագիրն: Կը յուսանք որ մեր այս վերջին հրաւերը այլևս անհետեւանք չի մնար:

Յատկապէս կը խնդրենք նաեւ մեր գործակալներէն, որ այլևս չի յապաղեցնեն իրենց հաշիւներուն կարգադրութիւնը, հասցնելով մեզ գանձուած բաժանորդագիրները և հաշորդելով անվճարներուն ցանկը:

ՀԱԿԱՆՔՈՒԹԱՆԵՐՈՒ յօդուածներու մրցման արդիւնքը՝ ծանուցանող յայտարարութեան մէջ, զոր հրատարակեցինք նախորդ թիւով, սխալ մը սպրդած էր: Մրցանակ ստացող երկերկու յօդուած հրատարակող հինգ թերթերու, — որոնց յատկացուած է 5ականանգլ. ոսկի, — ցանկին մէջ ՄԲԵՆ. Մամուլի անունը դրուած էր փոխանակ Մանգումբի: Իսկ Իզմիրի շաբաթաթերթը կը ստանայ նոյն գումարը՝ երկրորդ մեծագոյն թիւով, այսինքն մէյ մէկ մրցանակ ստացող յօդուածներն հրատարակող թերթերու շարքին մէջ:

ԻՆՆԻՍՆ ապահովագրական ընկերութեան Արեւելքի Ընդհ. Տնօրէն Սիմոն էֆ. Քայսէրեանի կրտսէր քեռորդին՝ Երուանդ էֆ. Պաղիբեանեան որ Լիոնի իրաւագիտական համալսարանին ընթացքը յաջողապէս աւարտելով, Լիսանսիէի վկայական ստացած էր վեց ամիս առաջ, Իննիօնի Բարիզի կեդր. վարչութեան իրաւագիտական ճիւղի դիւանին մէջ գործնական վարժութիւն ստանալէ ետքը, շարժուա սկիզբը Կ. Պոլիս վերադար-

ձաւ: Երուանդ էֆ. պաշտօնի կոչուած է նոյն Ընկերութեան Արեւելքի Տնօրէնութեան կողմէ, Կ. Պոլսոյ վարչութեան մէջ:

ԾՈՒՎԱՅԻՆ Ապահովագրական երեք ընկերութիւններ, Յրանքֆօրթուազ, Լա Ֆէտէրալ, Լ'Էնդէրնասիօնալ, շրջաբերականով մը կը ծանուցանեն թէ Թուրքիոյ մէջ իրենց գործերուն աւելնալուն պատճառաւ՝ որոշած են ընկերակցութիւն մը կազմել և անոր ընդհանուր գործակալ կարգած են ի Թուրքիա, ԳԱՌԵԻԿ ԷՄ. ԱՍՏՈՒԱԾԱՍՈՒՐ որ արդէն իսկ կը վարէր Լա Յրանքֆօրթուազի գործակալութիւնը: Գ. Աստուածատուր էֆ., որ միանգամայն ներկայացուցիչն է Քիւթիսի ԲԱՒԻՐՆԷՆԻ կեանքի ապահովագրական ընկերութեան, ստանձնելով վերոյիշեալ ծովային ապահովագրական ընկերութեանց գործակալութիւնը, իր փորձառութեամբը և ուղղամտութեամբը ամէն ապահովութիւն կ'ընծայէ թէ այդ ճիւղին մէջ ևս իրեն դիմողները գոհ պիտի մնան:

ԶՄԵՌՆԱՍՈՒՄԻ յաւթիւ ձեր անձնական ու տնական պիտոյքները հայթայթելու համար երբ Ծուկայ ելլէք, այցելեցէ՛ք անգամ մը ՀԷՐԺԱՅԻ վաճառատունը, որուն նոր Ազդէն ինչպէս կ'երեւայ, իր յարաճուն գործառնութեանց բերմամբ՝ գոհարեղէններու և ոսկեղէններու առուտուրէն և պատրաստ հանդերձեղէններու վաճառման համար իր ունեցած մասնաճիւղէն զատ, հաստատած է նաեւ ճիւղ մը՝ ճերմակեղէններու, ֆանթէզի և թօհաֆիէ ապրանքներու, կարասիի, մահճակալի, ևայլն, բոլորն ալ լաւագոյն գործարաններէ ելած ու ընտիր արտադրութիւններ: ՀԷՐԺԱՅԻ վաճառատունը սա առուելութիւնը կ'ընծայէ հանրութեան, որ իր ամէն կարգի վաճառումներուն 100ին 20ը միայն կանխիկ կ'ընդունի, իսկ մնացեալին համար շաբաթական 100ին 5 վճարման կարգադրութիւն մը կ'ընէ: Եւ այս կերպով, ամէնէն համեստ քսակներուն իսկ դիւրամատ չելի են իր վաճառումները:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԹԻԻԾԵԱՆ
Տէր ԷՆ Տճօրէն—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼՔ Թրագի

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐԾԻ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն Էր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն Էր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեալի համեմատութիւնն է 74%, որով ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց առած երաշխաւորութեանէն:

Ընկերութեան վարչական խորհուրդը կազմուած է Թրանսայի ամէնէն նշանաւոր դրամատէրներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Թրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական խորհուրդի անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ, Դրանսայի արքայի ընկերութեան վարչական խորհուրդի անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԻՄ, նախկին դռնապան.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Պօլիս, Սաւթեան-Համամ, Բասամ Բաթրընդօղլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.— Շահաւոր դիմել պիտի տուի այն ֆինիշին որ կ'աւելու արգիւնք մը իր ազորած քլայ անձնապէս:

3—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ բօնաձիլի ապրանց

Մեծ—Շուկայ, Քիւրքէնիւրու դրան կից, Թ. 41—43

Նոյնպէս, ալաւի եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պօլիս, Սաւթեան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ Թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թօնաձիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յառաւի հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղեկութիւն, եւ դիւրամատ չելի գինեւոր առաւելութիւնն ալ կ'ընծայեն հաւատարմութեան:

Աղամ վարչական մեծապէս գոհ թողնուած է իր բաւարար լինելու համար:

պէտք է որ Շուկայ կլու յամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հաշուելու համար:

3—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղեաց, միզային ճանրաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հիւս եւ նոր դաշտիկան խտերը: Այս վերջին խտերը առանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կ'արշաւնի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ճիւղ: 3—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆԶՈՆ 1782 ԻՆ
ՆԸ ԳՈՐԾԻ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

• ՆԱԳԼ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ ռուսկ հրդեհի դէմ Ապահո-
վագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ վէճատուց մէջ
իր տնտիջական վճարումներով:

ՖԻՆԻՔՍ հ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէն տեսակ տնտեսութեան
շարժուն օտարութեամբ, յայտ նպատակաւ
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.
ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Յ.՝ Ի՞նչ վճա-
րած է առաւել քան 27,000,000 տեղի.
տեղի:

Ընդհ. գործակալ Պայտի, Է. Գաւա-
ռա՝ Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերալիս խան, Պանք Օթմանի վո
Ղալաթիս:

Փոխ գործակալը Ի Պայտի-
ՌՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԷՔԷԱՆ
Էմրն պէյ խան Ֆնսզլեան խան
Զահիլ քիազեբու

2-10

Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԼ. ՄԵՇ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'ս

ԳԵ. ԵԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը 6էն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ 10-10

ՅՄԱՔԱՅԻՆ ԵԻՐՈՊԱՅԻ ՄԵՇԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԷՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցմահ բոցակի միւղեր
VICTORIA ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԷՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ'
ԲՇԿԱԿԱՆ քննութեամբ եւ թէ առանց բՇԿԱԿԱՆ քննութեան
DE Առանց բՇԿԱԿԱՆ քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
BERLIN բուն վճարումները շարաթական մասնավճարներով տեղի կունենան,
օկսեալ 5 շրուշէն

Ապահովագրեալ գումար 1904ին Ֆր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ին » 605,718,000

Հաստատած 1853 սեպտ. 20ին ար-
քայականհրովարակալ եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քել:

ԸՆԿ. ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա
եւ Բրէտի Լիոնէ

Լիազոր Ընդհ. Ներկայացուցիչ
Ա. Կ. ԼԻԻԶԷՆԱ

Կալաթա, Պերէֆէր խան

Օրիանդ-Պանքի դէմ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ

ZUSUSSETUL Ի ԲՈՒԻՁ 1828-1829

Հ Ի Դ Ե Զ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փաստք	274,000,000	Քր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փաստք	129,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐՅԼԻ ԶԷ ԿՏՆԵԼ ԱՐԵՐԵԼԻՒ ՄԷՁ ԿՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոն ապահովագրուողք ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբուրքիւններէն, որոնք կենթարկուին միշտ այն անձինք, որ ջանաբաժիններու բարդման (accumulation des bônâces) ՅՈՒՐԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեւամբ գործող ընկերութեանց կ'ապա հովադարարուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Գաքքըր Օղլու

Մասնաձիւղ Ղալաթիա, Ինայէթ Սան:—Դործակալութիւնք Թուրքիոյ ԳԼԻ Եւրոպայի քաղաքացի մէջ

5-10

ՖԵՆԻԲՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հոգեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՐԵՍ ԱՌԻՒ ՏԵ ՊԱՎԻԷՐ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. Ընդգեմ հոգեհի եւ ծովայինարկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամասունքն է Ի Կ. Պոլիս, Գոքսի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Դրասնեակ, Պոլիս, Ալեքսանդ Խան,

4-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ԳԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հերձալի վաճառատունը՝ գահարկողներու, սպիկ եւ արծաթ շղթաներու, գրպանի, պատի եւ քօնոլի ժամացույցներու՝ մասնաւոր վաճառութեն զառ, իր բաղաժիւլ լոճա-
խարդներուն վաճառութենէն քաջալերուած՝ այս անգամ կը փութայ յայտարարել թէ ա-
մէն եղանակի լաւաւ կ'ընթերցանուի անոնց անհաճութեան վրայ պատրաստ ունի արանց, կանաչ
եւ աղաթից համար ամէն տեսակ հաշուաւորներ ու անձրեւի համար մուշտմալ վերաբոյժ-
ներ, նոսր անկողնիներ, փանթիկներ եւ թօսփիկներ ու ամերկիւնեան հօշիկներ։ Ունի
նոսր կանկարաւոր, ձեղունի լամպարներ, մահակալներ, եւրոպական ու ամերկիւնեան գ-ր-
դեր, գետնի մուշտմալներ, կրճատփօններ ու պիտիքութեան՝ ամենավերջին կառարկու-
թիւններով։

Հերձալի վաճառատունը իրաւունքաւոր ու լայնօրէն շահած է հանրութեան
վստահութիւնը եւ գահարկողներուն իր տպարաններուն տախտակներէն եւ սպիկներու
մաքրութեան, ձեւաւորութեան եւ օժտման թեան համար։

Այս ամէնուն արտաւար արժէքին վաճառումն է

ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ

Միայն թէ զնուած տպարանին հարկերին 20ը կտրելի, իսկ մնացեալ գումարին՝ Լա-
մար շարաքովուն հարկերին 5 վճարմամբ պատրաստ է հայրթայթել։

Վաճառատունն հաստատուած է

ՄԵՆՇԵՆԿՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵՆՇ ՓՈՂՈՑ ԹԻՒ 13

Անգամ մը այլեւեւ բաւակած է համազանգու համար թէ՛ Հերձալի տնտեսի կող-
մակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գահարկող իր ամէնէն ղեւաւորահաճ լոճախարդները։
Կանխիկ գնողներու նամար հարկերին 5 զեղչ։

Սակարկուքիւն չկայ։

Շարաքովուն վճարմանց համար հաւաքըններ միշտ պատրաստ են։

1—10



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՆ, ԿԵԱՆՔԻ, ՓՈՒՍՏՐՈՒԹԻՒՆԻ ՍՐԿԱՄԻ

1881 մարտ 20ի Կայս. Ուղղով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութեան կ'ընդունի
ԿեԱն-Քի վրայ, եւ ՀՐԴԵՆ, ՓՈՒՍՏՐՈՒԹԻՒՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՍՐԿԱՄ-
ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ-
ՐՈՒԹԵԱՆ ՍՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կառ-
բաւելուն դէմ։

Ընկերութեան դրամադրուիւր, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամա-

դրուի եւ միասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան
խան, Վոյվաթ, Ղալա թիւ, 7—10